«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարողությունը

Հաստատություն՝ << Բյուրականի թիվ 15 մանկապարտեզ >> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Սուսան Առաքելյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

2. ԳԼՈՒԽ1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՎԵԼՈՒ ՄԻՋՈՑ……5

3. ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ ՄԵՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՎԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ……12

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……22

5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային շատ ավանդույթներ մեր օրերում դարձել են հասունացող սերնդի դաստիարակության կարևոր միջոցներ: Նախադպրոցական տարիքի երեխաներին ազգային ավանադույթների ոգով դաստիարակելու հարցը հատկապես վերջին տասնամյակների ընթացքում լայն ուսումնասիրման առարկա է դարձել: Ազգային ավանդույթների օգտագործումը այսօր էլ կարող է մեծապես նպաստել նախադպրոցականի բարոյական կատարելագործմանը, կարող է դաստիարակությանը պատմական թափ հաղորդել, հնարավորություն ստեղծել ղեկավարվելու ժողովրդի և նրա մշակույթի հազարամյա փորձով: Սակայն սա բավականին դժվարին գործ է և պահանջում է ստեղծագործական շնորհք, անցյալի մշակույթի նկատմամբ բացառիկ նրբազգացություն, արդիականության խոր և սուր զգացողություն:

Այսօր հույժ անհրաժեշտ է օգտվել մեր նախնիների մշակութային ավանդույթներից՝ զարգացնելու նախադպրոցական տարիքի երեխաների ոչ միայն գեղագիտական զգացողությունը, այլև նրանց ստեղծագործական կարողությունները, անհատականությունը, հոգեկերտվածքը, ազգային ինքնաճանաչողությունը, ինքնագիտակցությունը:

Ուսումնասիրության արդիականությունը: Մեր հետազոտական աշխատանքի հիմնախնդիրը պայմանավորված է նախադպրոցական կրթական հաստատությունում սաների հայրենաճանաչողության ձևավորումը ազգային ավանդույթների փոխանցմամբ և այդ խնդիրը լուծելու հիմախնդրի ձևավորմամբ:

Ուսումնասիրության նպատակը: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է մանկապարտեզում կիրառել սաների հայրենաճանաչողության զարագացմանը նպաստող ազգային ավանդույթների ուսումնասիրմանը և փոխանցմանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության խնդիրները.

1. Ուսումնասիրել հետազոտական աշխատանքի հիմնախնդրի դրվածքը առկա գիտամեթոդական գրականության մեջ:
2. Իրականացնել հարցախույզ դաստիարակների հետ, որի նպատակն է պարզել նրանց կարծիքներն ու առաջարկությունները մեր հիմնախնդրի շուրջ:
3. Իրականցնել դասեր և արտադասարանական միջոցառումներ՝ պարզելու համար հեքիաթների ուսումնասիրման միջոցով ազգային ավանդույթների բացահայտման հնարավորությունները և մշակել մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության մեթոդները: Ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք հետևյալ հետազոտական մեթոդները.

- Հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականությանուսումնասիրում և արդյունքների վերլուծություն:
- Նախադպրոցական կրթության ծրագրի և ուսուցանվող նյութերի վերլուծություն մեր հիմախնդրի տեսանկյունից:
- հարցախույզ, զրույց, արդյունքների քննարկում նվերլուծություն:
- Ուսումնասիրության տվյալների վիճակագրական վերլուծություն:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑ

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Սկզբնական և կարևոր նախապայմանը երեխաներին դպրոցական ուսման նախապատրաստելն ու դպրոցական կյանքին ադապտացնելն է:

Նախադպրոցական կրթության ծրագիրը կազմված է չափորոշիչների հիման վրա: Ծրագիրը կազմելիս հաշվի է առնվել նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների հիմնական սկզբունքները՝ կառուցվածքը և գործառույթները, որոնք իրենց մեջ ներառում են կրթադաստիարակչական հիմնական ուղղություններն ու բաղադրիչները: Ծրագրում առաջարկված է մանկավարժական գործընթացի հիմքում ընկած համագործակցային մոդելը, նախադպրոցականի ակտիվ ուսուցման մեթոդիկան: Նոր ծրագիրը նախատեսում է ուսուցումը և դաստիարակությունը իրականացնել հայրենիքի նկատմամբ սիրո, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, ազգային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմամբ ու արմատավորմամբ: Սաների մեջ ձևավորվում է իրականության, բնության, իրադարձությունների նկատմամբ արժեքային, ճանաչողական վերաբերմունք, ձևավորվում են ապագա դպրոցականի ինքնագիտակցության հիմունքները:

Դպրոցին նախապատրաստվել նշանակում է հատուկ նախապատրաստական աշխատանք կատարել 5-6 տարեկան սաների զարգացման և կրթական ընդհանուր նպատակներին համապատասխան՝ ընկալման, ըմբռնման ու յուրացման համար նախատեսված գիտելիքների, կարողությունների, հմտությունների,բարոյական արժեքների ձևավորման: Կարևորվում է նաև երեխայի մանկապար-տեզից դպրոց անցման հոգեբանական խնդիրը հաղթահարելու և դպրոցին հար-մարվելու հարցը:

Ծրագրում նախատեսված է զարգացման հետևյալ ոլորտները՝

ա) խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր

ճանաչողական զարգացում,

բ) սոցիալական ու զգացմունքային զարգացում,

գ) շարժողական ու ֆիզիկական զարգացում,

դ) ուսումնական, ստեղծագործական ունակությունների, առողջ սովորությունների զարգացում,

ե) արժեքային հիմունքների, բարեկիրթ վարքի ձևավորում[1, էջ 12]:

Ծրագիրը ներկայացնում է հինգ կարևոր բաժինները՝ մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, ֆիզկուլտուրա, երաժշտություն, և կազմված է գործունեության երկու ձևերից՝ խաղ և աշխատանք: Ծրագիրը համալրվել է նաև նոր բաղադրիչներով՝ էկոլոգիա, վաղ գրաճանաչություն, բարեկիրթ, անվտանգ վարքագիծ, անվտանգ երթևեկություն և երեխայի կյանքի կազմակերպում՝ օրվա ռեժիմ, կոփիչ միջոցառումներ:» [12, էջ 45]:

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: Դրանք չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու: 21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Սա ցանկացած նախակրթական հաստատության զարգացման ծրագրի պահանջներից մեկն է: » [9, էջ 58]:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել

կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հիբրիտ՝ հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է՝ ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Խնդրի իրագործման համար մենք առաջարկում ենք. ծանոթանալ ազգային ծեսերին ու տոներին, ծեսը վերականգնել, նրան նոր կյանք տալ: Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո՝ որոշում ենք, թե ինչ ճանապարհ են անցնելու երեխաները՝ ծիսակատարությանը նախապատրաստվելիս. ծանոթանում են ծեսի հետ, հավաքում են տեղեկություններ տարբեր աղբյուրներից՝ մեծերից, մեծերի օգնությամբ՝ ինտերնետից, գրքերից և այլն, մեծերի օգնությամբ գրի են առնում խաղիկներ, առած – ասացվածքներ, հանելուկներ, հեքիաթներ, պատմություններ, ավանդություններ, երգեր [8, էջ 112]:

Սաները նկարում են ծիսական հերոսներին, ծիսական պատկերներ, սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, օրհնանքներ, սովորում են ավանդական պարեր, պատրաստում են ծիսական պարագաներ, խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր, բեմականացնում են երգեր, կատարում են բնագիտական փորձեր, գնում են ճամփորդության, հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք, մեծերի օգնությամբ գրում են նամակներ, բարեմաղթանքներ, վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը» [9, էջ 36]:

Ի՞նչ խնդիրներ են լուծվում. նյութի յուրացում (լեզուն, մտածողության գեղարվեստական այլ արտահայտչամիջոցներ), գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում գեղարվեստական խոսքի մշակում, տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի

շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական), գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում, ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից: Այս աշխատանքները նպաստում են. երեխայի բառապաշարի հարստացմանը, մտածողության ձևավորմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը, ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը, բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը, ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ, զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն), հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները, ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին: Երեխան կիմանա ազգային ծեսերը, ազգային սովորույթները, ազգային ավանդական պարերը, հայկական ժողովրդական և ծիսական երգերը, ծիսական կերպարները, ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը, ծիսական կերակրատեսակները, ծիսական պարագաները: Երեխան կկարողանա՝ պարել ազգային ավանդական պարեր, երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր, պատրաստել ծիսական պարագաներ, խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր, պատրաստել ազգային ծիսական կերակրատեսակներ, համացանցից, այլ աղբյուրներից ծեսին վերաբերվող նյութեր գտնել: Երեխան կլինի ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող: Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: [7, էջ 24]:

Ամեն մի ժողովրդի կյանքում, պատմական զարգացման, տնտեսական ևմշակութային աճի ընթացքում ծագել և զարգացել են որոշակի, տվյալ ժողովրդի, առանձնահատուկ սովորույթներ, ավանդույթներ: Առանձին ժողովուրդներին բնորոշ ավանդույթները կոչվում են ազգային ավանդույթներ, որոնք առաջացել են որպես օրինաչափ երևույթներ և այնքան հին են, որքան մարդկային պատմությունը: Ազգային ավանդույթները ժողովրդի հոգևոր կյանքի այն տարրերն են, որոնցով մի ազգի հոգևոր կերտվածքը այս կամ այն չափով տարբերվում է մյուսից: Հարուստ և ինքնատիպ է հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթը: Այն իր արմատներով գնում է դեպի պատմական հեռավոր անցյալը: Ինչպես

յուրաքանչյուր ժողովուրդ, հայերն էլ պատմական երկարատև զարգացման ճանապարհին մշակել և կենցաղում արմատավորել են իրենց բնորոշ սովորույթներ, վարքի նորմեր, առօրյա կյանքի կանոններ, որոնք հաղորդվել են սերնդեսերունդ և դարձել ազգային ավանդույթներ: Դրանց հիմքում ընկած է հազարամյակների ընթացքում աշխատավոր ժողովրդի ձեռք բերած փորձն ու իմաստությունը: Սովորույթների և ավանդույթների համակարգի միջոցով յուրաքանչյուր ժողովուրդ վերարտադրում է իրեն, իր մշակույթը, բնավորությունը, սերունդների հոգեբանությունը: Հայ ժողովուրդը հայտնի է իր հյուրընկալությամբ, ջերմությամբ և խաղաղությամբ: Տեղացիները հաճելիորեն զարմացնում են զբոսաշրջիկներին իրենց անմիջականությամբ, անկեղծությամբ և առատաձեռնությամբ: Հայերն աչքի են ընկնում նաև հարգալից վերաբերմունքով տարեցների նկատմամբ: Հայ ազգին բնորոշ սովորույթներն ու ավանդույթները ձևավորվել են դարերի արդյունքում: Ընդունված է կարծել, որ հայերը տաքարյուն են, դրական և անեղծ: Հայերը շատ հոգատար են իրենց երեխաների նկատմամբ, և ամեն ինչից վեր են դասում ընտանիքը: Մեծահասակների դերը շատ է կարևորվում հատկապես ընտանիքում: Հայերն ավանդապաշտ ազգ են և ունեն բազում սովորույթներ, տոներ որոնք փոխանցվում են սերնդեսերունդ: Ստորև ներկայացնենք դրանք ։

Սուրբ Ծնունդ

Հայ Առաքելական եկեղեցին այն տոնում է հունվարի 6-ին: Հունվարի 6-ին Սուրբ Ծննդյան Սուրբ պատարագից հետո կատարվում է Ջրօրհնեք, որը խորհրդանշում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը: Խաչով և Սրբալույս Մյուռոնով օրհնված հրաշագործ ջուրը բաժանվում է ժողովրդին՝ ի բժշկություն հոգևոր և մարմնավոր ախտերի: Սուրբ Ծննդյան տոնակատարությունների շարքում կատարվում է նաև Տնօրհնեքի արարողություն: Սուրբ Ծննդյան և Ս. Հարության տոներից հետո մարդիկ հոգևորականին իրենց տուն և աշխատավայր են հրավիրում՝ տոնի կենարար ավետիսը և աստվածային օրհնությունը ստանալու նպատակով: Տնօրհնեք կատարվում է նաև այն ժամանակ, երբ տանը խախտվում է խաղաղությունը կամ զգացվում է դիվային ուժերի ներկայություն: Հունվարի 7-ը, ինչպես և բոլոր տաղավար (մեծ, գլխավոր) տոներին հաջորդող օրերը, հանգուցյալների հիշատակության օր է՝ Մեռելոց:

Մանկապարտեզի սաներին ծանոթացնում ենք նախկինում իրագործված Ամանորի և

Սուրբ Ծննդյան ծիսակարգերի հետ: Սաները յուրացնում են ազգագրական նյութը՝ ծիսական երգեր, պարեր, պարերգեր, խաղերգեր, պատրաստեցինք ծիսական պարագաներ:Խաղացինք ընկուզախաղեր, որտեղ մեր երևակայությամբ ստեղծեցինք նոր խաղեր: Ամանորի և Սուրբ Ծննդյան հետ առնչվող թեմայով պատրաստված պարագաներով ձևավորեցինք ծիսական ճյուղը: Ազգային ծիսական միջավայր էր ստեղծվել, որտեղ մեծով, փոքրով ազատ ու անկաշկանդ խաղացինք, ուրախացանք, մեր իմացական, զգայական դաշտը լցվեց նոր, թարմ նորույթով, որն, ըստ էության, բոլորովին էլ նոր նյութ չէր, բայց մեզ համար էր նորություն: Այդ ազգային բնական միջավայրում բնական ճանապարհով էլ փաստորեն զարգանում է հայ մանուկների գեղագիտական ճաշակը:

Տրնդեզ կամ Տյառնընդառաջ

Մանկապարտեզի ավագ խմբում պարտադիր կերպով սաներին ծանոթացնում ենք արարողության կատարման կարգի հետ և նշում ենք անպայման: Նրանք իմանում են, որ տյառնընդառաջը Փետրվարյան տոներից է և նշվում է ամեն տարի փետրվարի 14- ին (փետրվարի 13-ի երեկոյից սկսած): Այս տոնը համարվում է գարնան ավետաբեր,առատ բերք ու բարիքի, նոր ամուսնացող զույգերի բարօրության, պտղաբերության նախագուշակ: Տոնի խորհուրդը խարույկ վառելն է, քանի որ հնում հայերը հավատում էին, որ կրակը խափանում է չարը: Երիտասարդներն ու նորապսակները խարույկի վրայով ցատկում են, որպեսզի կատարվեն իրենց նպատակները, տարին բարի լինի,նորահարսներն էլ մայրանան այս տոնին:

Սուրբ Զատիկ կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն

Քրիստոնյա եկեղեցիների, այդ թվում նաև Հայ Առաքելական եկեղեցու հնագույն և գլխավոր տոնը, հինգ տաղավար տոներից մեկը:

Հայկական ավանդույթում, սույն հավկիթներով հավկթախաղ է տեղի ունենումերկու հոգու միջև: Կոտրող հավկիթը հաղթող է ճանաչվում և ուտում են կոտրված հավկիթը: Նաև ավանդույթ է Զատկվա հավկիթներն ուտել թարխունով, աղով և լավաշով:

Զատիկը հայերի մոտ տոնվել է ապրիլ ամսին՝ շատ ավելի վաղ, քան քրիստոնեությունն է: Այն զատիկ է կոչվել ձմեռվանից գարունը զատվելու առթիվ:

Վարդավառ

Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոնն է: Այն եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է: Այն շարժական տոն է և նշվում է 35 օրերի ընթացքում՝ Զատկից 14 շաբաթ հետո՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Տոնի պատմությունը գալիս է դեռևս հեթանոսական ժամանակներից և կապվում է հայկական դիցարանի ջրի, սիրո, պտղաբերության և գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ, որին վարդեր էին նվիրում, աղավնիներ էին բաց թողնում և միմյանց վրա ջուր էին ցողում ։ Ջուր լցնելու սովորությունը պահպանվել է նաև մեր օրերում: Իսկ հայ առաքելական եկեղեցին Վարդավառը տոնում է որպես Քրիստոսի պայծառակերպության օր:

Տոնը սկսվում է վաղ առավոտյան: Իրար վրա ջուր են լցնում բոլորը. ոչ ոք չէր կարող դժգոհել կամ վիրավորվել, որովհետև համարվում էր, որ այդ օրը ջուրն ունի բուժիչ ուժ: Հնում տոնն ուղեկցվում էր ավանդական երգերով, պարերով և խաղերով: Միմյանց վարդեր են նվիրել, սիրահար երիտասարդներն աղավնիներ են թռցրել, և եթե աղավնին երեք անգամ պտտվել է սիրած աղջկա տան կտուրին, նույն աշնանը հարսնության են տարել նրան:

Տոնի խորհուրդը նշվել է հեռավոր ուխտագնացու յուններով: Մարդիկ սննդի երկօրյա պաշարով այցելում էին սրբավայրեր՝ իրենց հետ տանելով զոհաբերվելիք կենդանուն: Վարդավառն արտահայտում է պտղաբերությանգաղափարը: Այն ընտանիքի անդամներին և նույնիսկ ամբողջ ազգատոհմը միավորելու, հավաքելու խորհուրդ ունի, և այդ օրը սովորաբար հայրենի գյուղ, ծնողների տուն են գնում հեռավոր քաղաքներում ապրող զավակներն ու հարազատները: Վարդավառյան տոնակատարության մյուս խորհուրդը սերն է՝ Վահագնի ու Աստղիկի սերը:

Սաներին ծանոթացնում ենք նաև բարեկենդան տոնի հետ: Բարեկենդան տոնը խոր արմատներ ունի, որոնք ձգվում են դեպի հեթանոսական շրջան: Տոնի հիմքում ընկած էր բնության զարթոնքը և տարվա սկիզբը: Հնում մարդիկ հավատացել են, որ միմյանց կենդանություն մաղթելով նրանք աղերսել ենվերին ուժերին պաշտպանել իրենց կյանքը չար ուժերի ազդեցությունից: Տոնը ներառել էնաև բնության իրերի և երևույթների պաշտամունքն արտահայտող ծեսեր ու սովորույթներ:

Ջանգյուլում

Այս խորհրդավոր տոնը խորհրդանշում է մարդու և բնության անբաժանելի կապը:

Այն Հայաստանի տարբեր շրջաններում յուրովի է նշվում: Սակայն նախապեսկատարվում է ծաղկահավաք: Տոնի ժամանակ ամենուրեք կատարվում է վիճակահանություն և պարզվում, թե տվյալ տարում ո՞ր աղջիկն է ամուսնանալու: Տոնի օրը ջրով լի կուժերի մեջ գցում են ծաղիկների տերևներ և աղջիկներին պատկանող զանազան իրեր: Այնուհետև դեռահաս մի աղջկա հագցնում են հարսի զգեստ, վերցնում կժերը, ծաղիկները և շրջում տնետուն: Այս ամենը զուգորդվում են երգերով, կատակներով և դրամահավաքով: Հետո սկսվում է վիճակահանությունը, ում պատկանում է առաջին իրը, նրան մոտալուտ ամուսնություն է սպասվում: Կժից հանում են մյուս իրերը, որոնց պատկանող անձանց խրատներ և բարեմաղթանքներ են տրվում: Այդ տոնը լավագույնս նկարագրվում է Հովհաննես Թումանյանի «Անուշ»-ը պոեմում: Այսօր էլ Հայաստանի որոշ շրջաններում պահպանվել են տոնից առանձին բաղադրիչներ. Կարելի է հանդիպել մի խումբ վառ պատանիների, որոնք երգում են այդ տոնին բնորոշ «Ջանգյուլում» երգը (Ջանգյուլումը այդ ժամանակ աճող ծաղիկ է) : Հայերի շրջանում կա թասիբ՝ պատիվ, մեծահոգություն, հասկացությունը: Որքան մեծ է մարդու թասիբը, այնքան բաց է նրա «սիրտը» հյուրերի առաջ: Հայերի մոտ ընդունված է ցանկացած առիթով սեղան գցել: Դե, իսկ հայերի հյուրասիրության մասին գիտեն բոլորը: Հայերի կարծիքով, որքան շատ ես սեղան գցում, այնքան շատ քեզ է վերադառնում:

Այսպիսով՝ կարելի է ասել , որ հայկական տոներն ու ավանդույթները սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ հանդիսանում են սերնդե-սերունդ փոխանցվող հոգևոր- բարոյական արժեքների խիստ կարևոր տարր :

Ազգային տոներին և ավանդույթներին սաները ծանոթանում են հեքիաթների, առասպելներ միջոցով: Հայ մանուկները դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու պատրաստակամությամբ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ: Հեքիաթներիլավագույն նմուշներն այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը նգեղարվեստական մեծ բավականություն են պատճառում

մարդկանց: Նրանք ունեն յուրահատուկ նշանակություն այնքանով, որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ կերպավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները, մարդկության անկրկնելի մանկությունը: Այսպիսով, հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի:

Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը: Երեխայի համար հեքիաթների կարևորության, նշանակության մասին կարելի է խոսել անվերջ: Միանշանակ համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման և առողջ հոգեկերտվածք ձևավորելու համար անգնահատելի և անփոխարինելի են: Ի վերջո, երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և ստեղծագործ:

Երեխաներն ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան թե մեծահասակների դաստիարակչական քարոզները: Ուսումնասիրությունները ցույց են տվել՝ երեխաները, որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ արտահայտել:

Հեքիաթներն ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի պատկերավոր: Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն» [9, էջ 24]:

Այսպիսով, ժողովրդական բանահյուսությունն իբրև մանկական ընթերցանության նյութ և դաստիարակության առաջին օղակ միշտ բարձր է գնահատվել հատկապես նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության համար: Հեքիաթը մանկապատանեկան ընթերցանության ամենասիրելի տեսակներից է և մեծ դեր է խաղում մատաղ սերնդի աշխարհընկալման ձևավորման գործում:

ԳԼՈՒԽ 2.

ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ ՄԵՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՎԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

Դաստիարակների շրջանում անցկացրել ենք հարցախույզ ազգային ավանդույթների ուսումնասիրման և այն երեխաներին փոխանցելու վերաբերյալ: Հարցմանը մասնակցել են ավագ խմբի մի քանի դաստիարակներ: Այժմ ներկայացնենք հարցախույզի արդյունքները:

Մեզ հետաքրքրում էր՝ հարցմանը մասնակից դաստիարակները արդյոք կարևորում են ազգային հեքիաթների դերը սեփական ժողովրդի ավանդույթները բացահայտելու գործընթացում: Նշենք, որ հարցմանը մասնակիցները կարող էին ընտրել պատասխան տարբերակներից մի քանիսը:

Ինչպես երևում է տրամագիր 1-ում, «Ազգային հեքիաթների միջոցով կարել է կրթել և դաստիարակել հայ մանկանը» պատասխան- տարբերակն ընտրել է հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 70%-ը: «Հեքիաթներում արտացոլված են ժողովրդի կյանքն ու կենցաղը» պատասխան տարբերակն ընտրել է հարցման մասնակիցների 53.3%-ը: Մեր հարցմանը մասնակցած դաստիարակների միայն 16.7%-նէ կարծում , որ հնարավոր չէ ավանդույթներ փոխանցել հեքիաթների միջոցով: Այս պատասխանը կարող է պայմանավորված լինել ծրագրում առկա հայկական հեքիաթների սակավությամբ և այդ հեքիաթներում ավանդույթների ոչ ակնառու լինելով:

Տրամագիր 1



Երկրորդ հարցի նպատակն էր պարզել հնարավո՞ր է ժողովրդական

հեքիաթների միջոցով երեխային դաստիարակել և դարձնել բարոյապես կայուն



Տրամագիր 2

մարդ: Ինչպես ներկայացրել ենք տրամագիր 2-ում, հարցմանը մասնակցած դաստիարակների 60%-ը նշված պատասխան տարբերակներից ընտրել է առաջինը: Սա փաստում է, որ հայկական հեքիաթները մեծ դեր ունեն երեխաների դաստիարակության գործընթացում. Չէ՞ որ հերոսների արարքները վերլուծելով՝ մենք ավագ խմբի երեխաներին նաև դաստիարակում ենք: Դաստիարակների 40% ընտրել է երկրորդ պատասխան տարբերակը, նրանց կարծիքով հեքիաթները չեն կարող երեխային դաստիարակել և դարձնել բարոյապես կայուն մարդ, իսկ մասնակիցների 10%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին: Կարծում ենք, որ սա ցավալի ցուցանիշ է և կարող է պայմանավորված լինել հեքիաթների միջոցով երեխային դաստիարակելու վերաբերյալ պատկերացումների բացակայությամբ:

Մեր առաջադրած երրորդ հարցի նպատակն էր պարզել՝ երեխաներին հետաքրքի՞ր է ծանոթանալ ավանդույթներին և կարողանո՞ւմ են արդյոք յուրացնել դրանք: Մեր հարցումը վերլուծելով՝ կարող ենք եզրակացնել, որ հարցմանը մասնակցած դաստիարակները բաժանվում են երկու մեծ խմբի. դաստիարակներ, որոնք արժևորում են ավանդույթների բացահայտումն ու փոխանցումը և դաստիարակներ որոնք ավանդույթի փոխանցումը ժամանակակից երեխայի կյանքում չեն արժևորում (46.7%-ը ընտրել է առաջին տարբերակը, 46.7%-ը՝ երկրորդ պատասխանը, 6.7%-ը դժվարացել է հարցին պատասխանել): Սա կարող է

պայմանավորված լինել մեր կյանքից մի շարք ավանդույթների դուրս մղմամբ, քանի որ այսօր հնարավոր չէ ապրել այդ ավանդույթներով, բայց և այնպես ինչպես մեր, այնպես էլ շատ ու շատ ազգերի մշակույթին համ ու հոտ են տալիս ավանդույթները: Իսկ դրանց մասին իմանալը, դրանք վերաիմաստավորելը անհրաժեշտ է նորօրյա սերնդին:

Տրամագիր

Չորրորդ հարցի նպատակն էր պարզել, թե երեխայի անձի զարգացման համար ինչպիսի ազդեցություն են ունենում ազգային ավանդույթները: Մեր առաջադրած պատասխան տարբերակներից մասնակիցները հնարավորություն ունեին ընտրել մի քանիսը: Արդյունքում պարզ դարձավ, որ մեծամասնությունը՝ 80%-ը, կիսում է այն համոզմունքը, որ ավանդույթներն օգնում են հասկանալ ազգային բարքերն ու վարքերը, քանի որ մի շարք «ազգային կանոններ» ստեղծվել են ավանդույթների հիմքով: Հարցվածների 63.3%-ը կարևորում է ավանդույթների դերը հայեցի ապրելու գործում, իսկ 36.7%-ը ավանդույթների դերը համարում է երկրի մշակույթին ծանոթանալու միջոց: Մենք կարևորում ենք նշված պատասխաններից բոլորը, քանի որ ավանդույթները մեր կյանքն ու կենցաղը ներկայացնող լավագույն նմուշներն են:



Վերջին հարցի նպատակն էր պարզել, թե պատասխան տարբերակներում նշված մեթոդներից, մեթոդական հնարներից և աշխատանքի կազմակերպման ձևերից որոնք են հարցմանը մասնակից դասվարները կիրառում հեքիաթների միջոցով ազգային ավանդույթները բացահայտելու համար: Ինչպես երևում է տրամագրում, հարցմանը մասնակիցների 43.3%-ը ազգային ավանդույթները բացահայտելու համար ընտրել է բեմականացումների կազմակերպումը, 23.3%-ը՝ փոխներգործուն մեթոդների կիրառումը, 10%-ը՝ սաների մրցույթների կազմակերպումը, իսկ մյուս 10%-ը՝ բանավեճերի: 8%-ն ընտրել է խմբային աշխատանքների կազմակերպումը, իսկ 5.4%-ը՝ թեմատիկ սահիկաշարերի դիտումն ու քննարկումը: Այսպիսով, դաստիարակները հիմնականում կիրառում են փոխներգործուն մեթոդներ և բեմականացումներ, իսկ խմբային աշխատանքներ ոչ միշտ, այս ցածր ցուցանիշը պայմանավորված է խմբային աշխատանքների ընթացքում աղմուկի առաջացմամբ, որի պատճառով էլ դաստիարակները խուսափում են, իսկ սահիկաշարեր չեն դիտում, քանի որ դրանք պատրաստելը ժամանակատար է, ոչ բոլորն են կարողանում պատրաստել, ինչպես նաև մանկապարտեզներում չկան համապատասխան սարքավորումներ:

Վերլուծելով դաստիարակների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքները՝ եկանք եզրահանգման, որ հեքիաթներում ավանդույթներ գտնելն ու փոխանցելը բարդ և աշխատատար գործընթաց է, որը հնարավոր է իրականացնել միայն հետևողական և մեթոդապես ճիշտ աշխատելու շնորհիվ: Մենք իրականացրել ենք մի շարք աշխատանքներ ազգային ավանդույթները սաներին փոխանցելու համար, բայց մեր աշխատանքը չծանրաբեռնելու համար զետեղել ենք լավագույնները. ներկայացնենք դրանք:

Վերլուծելով իրականացրած հարցախույզի արդյունքները՝ եկանք եզրահանգման, որ հեքիաթներում ավանդույթներ գտնելն ու փոխանցելը բարդ և աշխատատար գործընթաց է, որը հնարավոր է իրականացնել միայն հետևողական և մեթոդապես ճիշտ աշխատելու շնորհիվ: Մենք իրականացրել ենք մի շարք աշխատանքներ ազգային ավանդույթները աշակերտներին փոխանցելու համար, բայց մեր աշխատանքը չծանրաբեռնելու համար զետեղել ենք լավագույնները. ներկայացնենք դրանք:

«Անահիտ» ժողովրդական հեքիաթի ուսումնասիրման ընթացքում կատարել ենք հետևյալ աշխատանքները.

- ✓ Խմբային աշխատանքի միջոցով վերհանեցինք այն արհեստները, որոնք բնորոշ են հայ ժողովրդին և փոխանցվել են սերնդեսերունդ: Քննարկեցինք դրանց առանձնահատկությունները:
- ✓ Մեզ համար կարևոր էր այն հանգամանքը, որ սաներին անդրադարձել էին հին հայկական արհեստների, մասնավորապես գդակագործությանը, հմայիլ- թալիսման՝ դողդոան գործելու արհեստին, «Մուշուրբա» բաժակ պատրաստելու արհեստին, կլայեկագործությանն ու գորգագործությանը:

✓ Յուրաքանչյուր խմբի հանձնարարեցինք ուսումնասիրել՝ ինչ աշխատանքներ են կազմակերպել հարսանիքի յոթ օրերից յուրաքանչյուրի ընթացքում (Ալյուրմաղեք և գաթաթուխ, գինեթափեք, ծառ կապել, եզնմորթեք, փեսաբաղնիք, հարս բաղնիք և հարս հագցնել, հարսի տան հարսանեկան խնջույք: Այս ամենից հետո ութերորդ օրը տեղի էր ունենում պսակի արարողությունը)[6, 54]: Այնուհետև սաներին սահիկաշարով ներկայացրին այդ աշխատանքները: Ներկայացնենք սաների կատարած բացահայտումներից մի քանիսը՝

«Հարս հագցնել» ծեսի ժամանակ հարսը հագնում էր «Շոր ձևք» ծեսի ընթացքում պատրաստված զգեստը՝ տարազը, որը կարվել էր փեսայի բարեկամների օգնությամբ և ամենևին էլ սպիտակ չէր, այլ՝ կանաչ, կարմիր:

Եզնմորթեքի ժամանակ մորթում էին մսացու ի բարօրություն նորապսակների, այս ծեսը այժմ ոչ բոլոր տեղերում է կատարվում, բայց մատաղի արարողությունը այսօր էլ արդիական է:

- Սաները լսում էին նաև «ականջ կտրել» դարձվածքի առաջացման պատմությունը, որը նրանց շատ դուր էր եկել: «Փեսաբաղնիք» ծեսի ժամանակ սափրել են փեսային՝ դեմքի որոշ հատվածներ անմշակ թողնելով, հարսանեկան խնջույքի ժամանակ խաղ է կազմակերպվել և փեսային սափրել ցանկացողները կատակել են՝ ասելով, որ պետք է վճարի՝ ածիլը սրելու համար, այլապես կկտրեն ականջը:

Այնուհետև վենի դիագրամի միջոցով համեմատել ենք մերօրյա հարսանիքներն ու հնում կայացած հարսանիքները: Ամբողջացնելով աշակերտների պատասխանները՝ կարող ենք ասել, որ պսակի արարողությունը միակն է, որը ոչ մի ձևափոխության չի ենթարկվել, իսկ մյուս ծեսերից պահպանվել են նրանք, որոնք հնարավոր են այսօր իրականացնել:

Այս աշխատանքներն ամբողջացնելու համար կազմակերպել ենք առցանց էքսկուրսիա դեպի Հայոց ազգագրության թանգարան: Այնտեղի գորգերի, կարպետների և կարպետագործ իրերի հավաքածուն հանրապետության լավագույն հավաքածուներից մեկն է: Գորգ գործելը ծիսակարգ է եղել, որն ուղեկցվել է երգերով ու աղոթքներով, նույնիսկ այսօրվա տարոսիկի դերը հնում «Գաթա գորգն» է կատարել, որը բաժանել են մասերի և տվել այն ընտանիքներին, որտեղ ազաբ աղջիկ կամ տղա է եղել: Հեքիաթներում

նույնիսկ հանդիպում ենք թռչող գորգերի, որոնք նույնպես գործող կերպար են հանդիսացել: Այսպիսով, քննարկել «Անահիտ» հեքիաթը և չանդրադառնալ հայ ժողովրդի կյանքում գորգի ունեցած նշանակությանը, անկարելի էր:

«Ձվեր՝Զատկի համար» հեքիաթը ուսումնասիրելիս անդրադարձել ենք Զատկի տոնը նշելու և տոնին ձու ներկելու ավանդույթին: Մասնավորապես, երգել ենք երգեր, մասնակցել ձվախաղին և խոսել տոնի խորհուրդի մասին: Ցավոք, շատ տոների ընկալումը մենք կորցրել ենք, ժողովուրդը այս և շատ ուրիշ տոների տոնախմբությանը մասնակից չի դառնում, արդյունքում էլ մենք հեռանում ենք մեր ազգային ավանդույթներից: Մենք կարծում ենք, որ այս հեքիաթի միջոցով կարելի է վերաիմաստավորել տոների խորհուրդը, աշակերտների հետ այցելել եկեղեցի և նրանց ներկայացնել տոնի նշանակությունը:

«Ով աշխատի, նա կուտի» հեքիաթի ուսումնասիրումը հրաշալի հնարավորություն է անդրադառնալու աշխատանքի և աշխատանքի բաժանում կատարելու ավանդույթին: Հնում, երբ հայերը ապրել են գերդաստաններով, և եղելէ տնտեսության պահանջարկ, ավագները կատարել են աշխատանքի բաժանում,

որին մասնակցել են նույնիսկ տան ամենափոքրերը: Իսկ այսօր պապի ու տատի կենսափորձը ոչ միշտ է փոխանցվում թոռանը, և խարխլվում է միասին աշխատանք կատարելու շղթան, ինչի արդյունքում մենք կորցնում ենք այս գեղեցիկ ավանդույթը: Թեև այս ավանդույթը չի պահպանվել, բայց հայերը շարունակում են արժևորել աշխատանքն ու աշխատանք կատարող մարդուն: Այս ամենը փաստում են այն առած- ասացվածքները, որոնք մինչ օրս հնչում են հայի շուրթերից և ունեն իրենց պատվավոր տեղը դպրոցական դասագրքերում.

«Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն», «Ով ալարի, ո՛չ դալարի», «Աշխատող խոփը չի ժանգոտի» և այլն:

Հեքիաթների միջոցով ազգային ավանդույթները բացահայտելու ընթացքում անհրաժեշտ է՝

- ✓ հաշվի առնել սաների տարիքային առանձնահատկությունները՝ չծանրաբեռնել նրանց նյութերով,

- ✓ հաշվի առնել՝ տվյալ խմբում աշխատանքի կազմակերպման ձևերից որն է արդյունավետ,
- ✓ սաներին տրամադրել հավաստի աղբյուրներ, որոնցից օգտվելով պետք է կատարեն հանձնարարությունները,
- ✓ եկեղեցական տոների տոնախմբությունները կազմակերպելուց առաջ անհատական զրույց անցկացնել աղանդավորական ընտանիքների երեխաների և նրանց ծնողների հետ։

Այսպիսով, ամփոփելով մեր կատարած աշխատանքները, կարող ենք ասել, որ հեքիաթների ուսումնասիրության ճանապարհով ազգային ավանդույթների բացահայտումն ու փոխանցումն արդյունավետ է, քանի որ իրականացվող աշխատանքները նպաստում են սաների հայեցի դաստիարակությանը, իսկ դաստիարակելով հայ երեխա՝ մենք կունենանք սերունդ, որը կիմանա իր ավանդույթները, կշարունակի դրանք և կփոխանցի սերնդեսերունդ։ Հայը միշտ կապրի, քանի դեռ ապրում է հայկականը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական և ծեսերին առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրության, ազգային տոներին ու ծեսերին անձնական մասնակցության, դրանք երեխաների համար նախարատրաստելու և փորձարկելու արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

1. Հեքիաթների ուսումնասիրության ճանապարհով ազգային ավանդույթների բացահայտումն ու փոխանցումն արդյունավետ է մանկապարտեզում, քանի որ իրականացվող աշխատանքները նպաստում են սաների հայեցի դաստիարակությանը, իսկ դաստիարակելով հայ երեխա՝ մենք կունենանք սերունդ, որը կիմանա իր ավանդույթները, կշարունակի դրանք ևկփոխանցի սերնդեսերունդ: Հայը միշտ կապրի, քանի դեռ ապրում է հայկականը:

   - Ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության համար թե՛ գիտելիքների հարստացման, թե՛ երաժշտական կարողությունների ու ճաշակի ձևավորման, թե՛ գեղարվեստական հմտությունների զարգաձման տեսանկյունից:
   - Երեխայի զարգացման համար անհրաժեշտ է անկաշկանդ միջավայր, որտեղ նա կկարողանա արձագանքել շրջապատին: Այն պիտի լինի բնության և սոցիալական միջավայրի համակցված մոդել, որպեսզի երեխային մղի սեփական գործողությունները համաձայնեցնելու այդ միջավայրի օրենքներին: Ուսուցումը զարգացման բնականոն գործընթացն ամրապնդող և մշակութային գործոններ ձևավորող միջոց է:
   - Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
2. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 515-Ն որոշում.
3. ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» N 744-Ն որոշում.
4. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի «Նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» N 76-Ն հրաման.
5. Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառակավորման բնութագրերը հաստատելու մասին» N 416-Ն հրաման.
6. «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
7. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010թ. /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/
8. «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները» 1-ին, 2-րդ մաս - Երևան 2007 թ. / Հ. Պետրոսյան/
9. «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում» - Երևան 2014թ. /Լ. Սմբատյան/
10. «Մայրենի լեզվի պրապմունքները մանկապարտեզի ավագ խմբում. ուսումնամեթոդական ձեռնարկ» - Երևան 2011 / Ս.Չիբուխչյան Ա., Լ. Սարգսյան/
11. «Մանկավարժական հաղորդակցություն» - Երևան 2010 թ. / Ն. Հակոբյան, Ս. Գևորգյան/
12. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2020 /Հ. Միտոյան/
13. «Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության